Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)
Շ 973

Գիտաժողովը նվիրվում է
Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Արտակ Մաղալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝
Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, **Վլադիմիր Բաբխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բաբկեն Հարությունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Աբրահամ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

ՄՀԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Շուշիի «Կաճառ» գիտական կենտրոն

ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԵՎ ԼՂՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հայտնի է, որ «ԼՂՀ տոն և հիշատակի օրերի մասին ԼՂՀ օրենքով», որը ԼՂՀ նախագահի կողմից ստորագրվել է 1995 թ. դեկտեմբերի 25-ին, մայիսի 9-ը սահմանվել է Հաղթանակի, ԼՂՀ պաշտպանության բանակի և Շուշիի ազատագրման օր[1]: Մայիսի 9-ը նաև Պաշտպանության բանակի օր հռչակելը կարելի է բացատրել Շուշիի հաղթանակի կարևորությամբ, ռազմագործողության գրագետ պլանավորման ու փայլուն կերպով անցկացման, ինչպես նաև առաջին անգամ մի քանի զորատեսակների ներգրավման ու նրանց փոխգործակցության ապահովման և այլ հանգամանքներով: Հիրավի, Շուշիի ազատագրման ռազմագործողության ընթացքում ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը և կամավորական ջոկատները լուրջ քննություն բռնեցին և ապացուցեցին միասնական լինելու առավելությունը: Պատահական չէ, որ Երկրապահ կամավորականներն իրենց՝ 1998 թ. նոյեմբերյան համագումարում մայիսի 8-ը հռչակել են Երկրապահի օր[2]:

Այս ամենով հանդերձ, մեր ուսումնասիրությունների ընթացքում չեն գտնվել իրավաբանորեն հիմնավոր փաստարկներ մայիսի 9-ը ՊԲ-ի ստեղծման օր համարելու օգտին: Ընդհակառակը, մեր կողմից վերհանված բոլոր փաստերը միահամուռ վկայում են, որ ՊԲ-ի կազմավորման համար ելակետ պետք է ընդունել 1992 թ. փետրվարի 24-ի ԼՂՀ Գերագույն խորհրդի (ԳԽ) նախագահության որոշումը ԼՂՀ ինքնապաշտ-

---

[1] Տե՛ս «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, ԼՂՀ օրենքներ, Գործ N 4, էջ 23:

[2] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», թ. 90, 1998 թ.:

պանության ուժերի (ԻՊՈՒ) մասին:

Փորձենք հիմնավորել մեր այս պնդումը՝ հենվելով արխիվային նյութերի և իրադարձությունների տրամաբանական զարգացման ու պատճառահետևանքային կապի վրա: Մասնավորապես արխիվային նյութերից հայտնի է դառնում, որ արդեն 1995 թ. դեկտեմբերի 5-ին ավարտվել էին «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տոն և հիշատակի օրերի մասին» ԼՂՀ Օրենքի նախագծի մշակման աշխատանքները, որի մասին ԼՂՀ խորհրդարանի* քարտուղար տիկին Է. Գաբրիելյանին ծանուցել է ԼՂՀ խորհրդարանի կրթության, գիտության, մշակույթի, առողջապահության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական (ժամանակավոր)* հանձնաժողովի նախագահ Ա. Սողոմոնյանը[3]: Օրենքի նախագծում Պաշտպանության բանակի օր էր նշված հունիսի 7-ը[4]: Մեր ուսումնասիրությունների և ժամանակի գործիչների հետ հարցազրույցների արդյունքում պարզվեց, որ հունիսի 7-ն ընտրվել է 1991 թ. այդ նույն օրը Հադրութի շրջանի Ծամձոր գյուղի ազատագրման կապակցությամբ՝ որպես ինքնապաշտպանական ջոկատների ձեռք բերած առաջին հաջողություն: Կարծում ենք, այս ընտրության համար պակաս կարևոր դեր չի խաղացել այն ժամանակ ԼՂՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ Ս. Բաբայանի ազդեցությունը, քանի որ, ըստ որոշ կարծիքների, հենց այդ օրն է վերջինս Ա. Կարապետյանից, մեղմ ասած՝ «վերցրել» ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունը:

ԼՂՀ Խորհրդարանը «ԼՂՀ տոն և հիշատակի օրերի մասին» Օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ քննարկել է 1995 թ. դեկտեմբերի 11-ին, ապա հետաձգել հաջորդ օրվան:

* Այսպես է բնագրում:

[3] ԼՂՀ Պետարխիվ, ֆ. 254, ց. 4, պ. մ. 16, կ. 2 (ԼՂՀ Խորհրդարանի երկրորդ գումարման առաջին նստաշրջան. 1995 թ. դեկտեմբերի 8–26-ի նիստերի սղագրությունները), էջ 15:

[4] Նույն տեղում, էջ 16:

Իսկ մինչ այդ նախագիծը ուղարկվել էր ԼՂՀ ՆԳ նախարարին, արդարադատության վարչության պետին, վարչապետին, պաշտպանության նախարարությանը, նախագահին*, և ստացվել են համապատասխան առաջարկություններ[5]: Դեկտեմբերի 12-ի քննարկման ժամանակ ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Ա. Սողոմոնյանը ներկայացրել է ստացված երեք առաջարկությունները. *մայիսի 9-ը*՝ նախագահի աշխատակազմի կողմից, *սեպտեմբերի 3-ը*՝ կառավարության կողմից, *հունիսի 7-ը*՝ Պաշտպանության բանակի կողմից: Հանձնաժողովի եզրակացությունը հետևյալն էր. քանի որ Պաշտպանության բանակն ինքն էր առաջարկում իր օրը, ուստի պետք է ընդունել հենց հունիսի 7-ը[6]: Սակայն ԼՂՀ ԳԽ խոսնակ Կ. Բաբուրյանի առաջարկությամբ ՊԲ-ի օրվա ընտրությունը հետաձգվեց՝ հաջորդ նիստում քննարկելու համար, մինչև առաջարկություններ ներկայացրած կողմերի ընդհանուր հայտարարի գալը:

Արխիվային նյութերի բացը լրացնելու նպատակով դիմեցինք ժամանակի գործիչներին: ԳԽ նախկին քարտուղար Է. Գաբրիելյանի և ժամանակավոր հանձնաժողովի նախկին նախագահ Ա. Սողոմոնյանի հետ մեր ճեպազրույցներից պարզ դարձավ, որ ԼՂՀ նախագահի աշխատակազմի առաջարկած օրն ընդունելու համար գլխավոր «փաստարկ» է համարվել տոն և հիշատակի օրերի քանակը հնարավորինս սահմանափակելու նպատակահարմարությունը[7]:

Երբ մեր կողմից վերհանվեց ու գիտական շրջանառության մեջ դրվեց Պաշտպանության բանակի կազմավորման իրավական թղթապանակը, բարձրաստիճան զինվորականներից մեկը, ի պաշտպանություն մայիսի 9-ի, հղում կատարեց ՀՀ Զինված ուժերի Ներքին ծառայության կանոնագրքին, որ-

* Բնագրում հաջորդականությունն այսպես է:

[5] Նույն տեղում, էջ 6:

[6] Նույն տեղում, էջ 11-12:

[7] Հարցազրույցները կայացել են 2007 թ. ամռանը:

տեղ սահմանված է, որ զորամասի տարեկան տոնի համար կարող է ամսաթիվ ընտրվել զորամասի պատմության հիշարժան օրերից մեկը՝ կազմավորումը, շքանշանով պարգևատրվելը, Հայրենիքի թշնամու դեմ մղված մարտում տարած նշանակալից հաղթանակը, մարտական հերթապահությունն առաջին անգամ ստանձնելը: Մինչդեռ, ինչպես հայտնի է, հիշյալ կանոնագիրքը ՀՀ Ազգային ժողովի համապատասխան օրենքով հաստատվել է 1996 թ. դեկտեմբերի 3-ին[8], այսինքն՝ Պաշտպանության բանակի օրը ԼՂՀ օրենքով սահմանելուց գրեթե մեկ տարի ուշ: Եթե անգամ Շուշիի ազատագրումը փորձենք դիտարկել «թշնամու դեմ նշանակալից հաղթանակի» տեսանկյունից, միևնույն է, չենք կարող անտեսել «կազմավորման օրը», որն ի դեպ Օրենքով նախատեսված դեպքերից առաջինն է: Մեր խորին համոզմամբ ՊԲ-ի կազմավորման ուղին իրավական հարթության վրա բավական տեսանելի ուրվագծվում է, թեև մի շարք առանձնահատկություններից ու օբյեկտիվ պատճառներից ելնելով՝ նրա գաղտնի զարգացումներն իրավաբանորեն ձևակերպվել են բավական ուշ:

Ինչպես մեզ հաջողվել է ցույց տալ, 1992 թ. փետրվարի 24-ը շրջադարձային է եղել ԼՂՀ ԻՊՈՒ-ի կազմավորման համար[9]: Փաստորեն 1992 թ. փետրվարի 24-ին ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերը պետական կարգավիճակ են ստացել, ինչը թելադրված էր ինչպես նախընթաց զարգացումներով, այնպես էլ առաջիկա կարևոր ռազմաքաղաքական խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Մինչև 1992 թ. փետրվարի 24-ը Արցախի տարածքում տարերայնորեն ձևավորված աշխարհազորային կամավորական ջոկատները հաջողությամբ իրակա-

[8] Տես Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի Ներքին ծառայության կանոնագիրք. Ե., ՀՀ ՊՆ հրատ., 1997, էջ 1, 252 հավելված 5:

[9] Տես *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991–1994 թթ.: Պատմ. գիտութ. թեկնածուի գիտակ. աստիճանի հայցման ատենախոսություն: Ե., 2001, էջ 158–159, *նույն՝* Պաշտպանության բանակ: Տես Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988–1994: Հանրագիտարան: Ե., 2004, էջ 549–554:

նացնում էին սահմանների և հանրապետության ներսում գտնվող թշնամական հենակետերին մերձակա հայկական բնակավայրերի պաշտպանության ոչ դյուրին խնդիրը: Հենց այդ խնդրից էր բխում նաև ադրբեջանցիներով բնակեցված այն վտանգավոր կրակակետերի վնասազերծման անհրաժեշտությունը, որոնք շրջափակել էին ճանապարհները, ավազակային հարձակումներ էին գործում խաղաղ բնակչության վրա և կողոպտում հանրային ու սեփական ունեցվածքը և, վերջապես, պարբերաբար գնդակոծում էին հայկական բնակավայրերը: 1991 թ. աշնանը Հադրութի շրջանում իրականացված ռազմագործողությունների շարքը, որոնց ընթացքում ազատագրվեցին «Կոլցո» գործողության ժամանակ բռնազավթված բնակավայրերի մի մասը և Տողը, նույն տարվա դեկտեմբերին Ասկերանի շրջանի Ջամիլլուի, Լեսնոյի, Մարտակերտի շրջանի Իմերեթ-Քարավենդ, Ումութլու և Ստեփանակերտի արվարձան Կրկժանի համար մղված մարտերը, 1992 թ. ձմեռային պատերազմափուլի հաջողությունները Կրկժանում, Մալիբեկլուում, Ղարադաղլուում և Վերին Վեյսալուում, ցույց տվեցին Արցախի ինքնապաշտպանության ուժերի որակական աճն ու մարտունակության բարձրացումը, հրամանատարների ու ազատամարտիկների մարտավարական հմտությունների և փորձի բազմապատկումը: Փաստորեն, հասունացել էր այդ ուժերին իրավական կարգավիճակ շնորհելու պատմական պահը: Մյուս կողմից, Ստեփանակերտի օդանավակայանի ազատագրման ու Խոջալուի կրակակետերի ճնշման վճռորոշ ռազմագործողությունից առաջ պահանջվում էր հայրենի իշխանությունների աջակցությունը հայ ազատամարտիկներին, ինչը կբարձրացներ նրանց մարտական ոգին, կբազմապատկեր հաջողությունը նվաճելու վճռականությունը:

Վերոհիշյալ նկատառումներից ելնելով, ԼՂՀ Գերագույն Խորհրդի նախագահության՝ 1992 թ. փետրվարի 24-ի Հ. ՆԽ-0019-1 որոշումը ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի մասին կարելի է բնորոշել որպես նորաստեղծ հանրապետության

սահմանները հաջողությամբ պաշտպանող աշխարհազորային-կամավորական ջոկատներին պետական ու իրավական աջակցություն, յուրօրինակ խրախուսում և ամենակարևորը՝ համապատասխան կարգավիճակի շնորհում:

Այդ պատմական որոշումն ընդունելիս ԼՂՀ ԳԽ նախագահությունը ելնում էր այն իրողությունից, որ Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության նկատմամբ տարվող ցեղասպանության, թալանի ու բռնության քաղաքականությունը և հայկական գյուղերի զանգվածային բռնատեղահանումը հանգեցրել են Լեռնային Ղարաբաղի շահերը պաշտպանելու կոչված կամավորական ջոկատների ստեղծմանը: ԼՂՀ բարձրագույն օրենսդիր մարմնի նախագահությունը նկատի էր առնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ Ադրբեջանական Հանրապետության կողմից հարաճուն զավթողական գործողությունները և, վերջապես, նպատակ է ունեցել հաշվառել զորահավաքային միջոցները և ապահովել հանրապետության պաշտպանությունը:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշել է կազմավորված զինված ջոկատները ճանաչել որպես ԼՂՀ ինքնապաշտպանության ուժեր և դրանք ենթարկել միասնական հրամանատարության: Նկատենք, որ այս վերջին դրույթը կոչված էր առանձին-առանձին գործող ջոկատների համախմբմանը, մեկ հրամանատարության ներքո նրանց ջանքերի համատեղմանը: Հիրավի, դա բարդ խնդիր էր, որի լուծման համար պահանջվեցին մի քանի այլ որոշումներ, հրամանագրեր և... ժամանակ:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը շրջանների ու քաղաքների գործկոմներին և զինկոմիսարիատներին հանձնարարում էր մեկամսյա ժամկետում անցկացնել հանրապետության բոլոր զինապարտների վերահաշվառում և զորակոչային տարիքի քաղաքացիների հաշվառում:

Որոշման երկրորդ կետով ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերում ներգրավված զինապարտները համարվում էին զորակոչված: Այնուհետև, զինկոմիսարիատներին հանձնարարվում էր ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շրջանային ստորաբաժանումների շտաբների հետ համատեղ կազմակերպել ԼՂՀ շահերի համար պայքարում զոհվածների, անհայտ կորած և հաշմված անձանց վերահաշվառում[10]:

Ակներևաբար, այս որոշմամբ իրավաբանորեն ձևակերպվել է ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈՒ) պետական կարգավիճակը, իսկ արդեն զինծառայության մեջ գտնվող զինապարտները ճանաչվել են զորակոչված ԼՂՀ-ի զինված ուժեր: ԼՂՀ-ի՝ խորհրդարանական հանրապետության գերագույն մարմնի նախագահության ընդունած որոշումն, անկասկած, օրենքի ուժ ունի, հետևաբար ԼՂՀ-ի զինված ուժերի կամ Պաշտպանության բանակի ստեղծումը պետք է համարել փետրվարի 24-ը: Հավելենք, որ ԼՂՀ Գերագույն խորհուրդը լիազորել էր ԳԽ Նախագահությանն՝ ընդունել օրենքներ և դրանց հավասարեցված որոշումներ (ելնելով պատերազմական իրավիճակից): Դա նախկին պատգամավորները բացատրում են նրանով, որ հակառակորդի ագրեսիայի պատճառով պատգամավորների մի մասը, զենքը ձեռքին, մարտնչում էր ԼՂՀ սահմաններում, ուստի հաճախ դժվար էր քվորում ապահովել, ուստի ԳԽ-ն լիազորել էր Նախագահությանն լինել մշտապես գործող մարմին և որոշումներ կայացնել...

Մայիսի 9-ը ՊԲ-ի օր հռչակելը կարելի է հասկանալ, քանի որ այդ օրը ձեռք է բերվել փայլուն ռազմական հաղթանակ, բայց ահա դժվար է համակերպվել այն մտքին, որ ՊԲ զինծառայողների ծառայության ստաժը հաշվարկվում է 1992 թ. սեպտեմբերի 1-ից: Ոմանք նույնիսկ պնդում են, որ ՊԲ-ն իբր ստեղծվել է սեպտեմբերի 1-ին: Սակայն, փաստն այն է, որ տակավին 1992 թ. օգոստոսի 14-ին «Պաշտպանական շրջաններ կազմակերպելու և ուժերի ու միջոցների շրջանային լրակազմի կազմակերպական-հաստիքային կառուցվածքի մասին» ԼՂՀ ինքնապաշտպանության կոմիտեի (ԻՊԿ) նախագա-

[10] ԼՂՀ Պետարխիվ, ֆ. 1, ց. 5, պ. մ. 13, կ. 1, թ. 24:

հի հրամանագրով ընդամենը ԻՊՈՒ-ի կազմավորման հերթական փուլն է նշանավորվել: Մասնավորապես, անցում է կատարվել ավելի խոշոր կանոնավոր ստորաբաժանումների (գումարտակների, դիվիզիոնների) վերակազմավորմանը (մինչ այդ մարտավարական միավորը վաշտն էր), ինչպես նաև ստեղծվել են 6 պաշտպանական շրջաններ: Փաստորեն, օգոստոսի 14-ի համապատասխան հրամանագրի կենսագործման երկար ու դժվարին ճանապարհին սեպտեմբերի 1-ը մյուս օրերից առանձնացել է սոսկ նրանով, որ ամսվա սկիզբն էր, ուստի նոր հրամանները գրվեցին, ու զինռոճիկները սկսեցին հաշվարկվել հենց այդ օրից: Ուստի, սեպտեմբերի 1-ը բանակի ստեղծման օր համարելը, ըստ մեզ, հիմնավորված չէ[11]: Մինչդեռ, 1992 թ. փետրվարի 24-ի որոշումը ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի մասին հանդիսացել է բանակի ստեղծման իրավական հիմքը և ռազմապաշտպանական ոլորտի հետ կապված հետագա բոլոր որոշումների մեկնակետը...

Մեր ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ ՊԲ-ի ստեղծման գործընթացն ունեցել է 4 փուլ[12], որոնց ներկայացումը, կարծում ենք, ավելի համոզիչ կդարձնի մեր տեսակետը:

Սկզբնական փուլում՝ 1988 թ. փետրվարի 22-ից 1992 թ. փետրվարի 24-ի ընթացքում, ձևավորվել են մի շարք կամավորական ինքնապաշտպանական ջոկատներ ու աշխարհազորային խմբեր, որոնք սկզբնավորվել են Ասկերան ավանի վրա աղդամցիների հարձակումից ու սումգայիթյան եղեռնագործությունից անմիջապես հետո և, ինչպես նշվել է վերևում, պաշտոնական կարգավիճակ են ստացել 1992 թ. փետրվարի

[11] Տե՛ս *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին 1991–1994 թթ.: Պատմ. գիտութ. թեկնածուի գիտակ. աստիճանի հայցման ատենախոսություն, էջ 86–88, 129–130:

[12] Նույն տեղում, էջ 158–159, *Հարությունյան Մ.*, Պաշտպանության բանակ: Տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988–1994: Հանրագիտարան, էջ 549–554:

24-ին՝ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության համապատասխան որոշումով: Այդ ժամանակ ինքնապաշտպանական ջոկատների խնդիրն էր ադրբեջանցիների հարձակումներից պաշտպանել խաղաղ բնակավայրերը: Անհրաժեշտությունից դրդված՝ տեղերում ստեղծվում էին աշխարհազորային խմբեր, որոնց առավել վտանգավոր իրավիճակներում օգնության էին հասնում քաղաքներում կազմավորվող զինված խմբերն ու ջոկատները: Կային նաև հատուկ պատրաստություն անցած կամ զինվորական փորձառություն ունեցող կամավորների մարտունակ ջոկատներ, որոնք գործում էին հիմնականում Հյուսիսային Արցախում, Հադրութի սահմանամերձ գոտում, Շուշիի շրջանի հայկական գյուղերում և այլուր[13]: Հարկ է նշել, որ ջոկատների ստեղծումն ու գործունեությունը իրականացվում էին ընդհատակում, որովհետև դրանք ԽՍՀՄ իշխանությունների կողմից դիտվում էին օրենքից դուրս, իսկ ՆԳՆ Ներքին զորքերին (ՆԶ) իրավունք էր վերապահված ցրել դրանք՝ առգրավելով առկա զենքն ու զինամթերքը:

Արցախի ինքնապաշտպանության պատասխանատուների խնդիրները որոշակի փոփոխություններ կրեցին ԼՂՀ տարածքից ԽՍՀՄ ՆԳՆ ՆԶ-ի ստորաբաժանումների դուրսբերումից (1991 թ. դեկտեմբերի 26-ից) հետո: Արցախ գործուղված Ա. Տեր-Թադևոսյանի ղեկավարությամբ նոր թափ ստացավ ինքնապաշտպանական ուժերի կազմավորումը: Հադրութի և Մարտունու շրջաններում դրանցում ընդգրկվեցին 400-ական, Ասկերանում, Մարտակերտում և Ստեփանակերտում՝ 500-ական մարտիկներ: 1991 թ. հոկտեմբեր- 1992թ. փետրվար ժամանակահատվածում նվաճվեցին մի շարք ռազմական հաղթանակներ, որոնք ամրապնդեցին ինքնապաշտպանական ջոկատների դիրքերը, նկատելիորեն համալրվեց նրանց սպառազինությունը, հրամանատարական կազմը մարտավարա-

[13] Ավելի հանգամանալից տե՛ս *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Ե., 2000, էջ 27–29:

կան փորձ ձեռք բերեց, բարձրացավ հայ ռազմիկների մարտական ոգին: Դրանք գործոններ էին, որոնք առավելագույնս նպաստեցին ազատամարտիկների մեջ սեփական ուժերի նկատմամբ վստահության ու հաղթելու վճռականության ձևավորմանը, որոնց շնորհիվ հաջողվեց համեմատաբար կարճ ժամանակամիջոցում՝ մինչև 1992 թ. մայիսի 18-ը ճնշել ԼՂՀ-ի տարածքի թշնամական բոլոր կրակակետերը[14]:

Մշտապես կատարելագործվում էր նաև ղեկավարման համակարգը՝ կադրային ու կառուցվածքային բարելավումների միջոցով: Այսպես, ԼՂՀ ԳԽ նախագահության՝ 1992 թ. մարտի 4-ի որոշմամբ գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանը նշանակվեց Արցախի ինքնապաշտպանության ուժերի հրամանատար, որի գործառութային պարտականությունները 1990 թ. սեպտեմբերի 10-ից, փաստորեն, կատարում էր Ա. Կարապետյանը[15]: Նույն օրը հաստատվեց նաև ԼՂՀ պաշտպանության խորհրդի կազմը՝ ԼՂՀ ԳԽ-ի խոսնակ Ա. Մկրտչյանի նախագահությամբ[16]: Իսկ մարտի 26-ին ԼՂՀ նախարարների խորհրդին առընթեր ստեղծվեց Պաշտպանության կոմիտե (ՊԿ), որն այնուհետև վերանվանվեց Ինքնապաշտպանության կոմիտեի (ԻՊԿ), որի նախագահ նշանակվեց Ս. Սարգսյանը[17]: Նորաստեղծ մարմինը, առաջնորդվելով ԼՂՀ ԳԽ և Նախարարների խորհրդի որոշումներով ու կարգադրություններով, կազմակերպեց ինքնապաշտպանական ջոկատների միավորման, բանակի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործը, ձևավորեց ու ղեկավարեց ԻՊՈՒ վարչության աշխատանքները: Տեղին ենք համարում անդրադառնալ նաև ՊԿ-ն ԻՊԿ-ի փոխակերպելու հարցին: Մեզ չհաջողվեց որևէ վավերագիր գտնել, որտեղ ամրագրված ու հիմնավորված կլիներ այդ փոխակերպումը. ամենայն հավանականությամբ նման փաստաթուղթ չկա: Մեր կարծիքով Պաշտպանության կոմիտեն Ինքնապաշտպանության կոմիտեի է վերանվանվել 1992 թ. օգոստոսի 15-ից հետո, որպեսզի այդ օրը ստեղծված Պաշտպանության պետական կոմիտեի (ՊՊԿ) անվան հետ շփոթմունքի տեղիք չտա:

[14] Տե՛ս *Հարությունյան Մ.*, Արցախի ինքնապաշտպանության ուժերի կազմավորումը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստ., 2000,1, էջ 80–83:

[15] *Հարությունյան Մ.*, Պաշտպանության բանակ: Տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994: Հանրագիտարան, էջ 552:

[16] Տե՛ս *ԼՂՀ ՊԱ*, ֆ. 1, ց. 5, պ.մ. 13, կ. 1, թ. 29:

[17] Տե՛ս *ԼՂՀ կառավարության արձանագրային բաժին*, ԼՂՀ ՆԽ 1992 թ. մարտի 26-ի նիստի արձանագրություն, հմ. 3, թ. 2:

ՊԲ-ի կազմավորման երկրորդ փուլի (1992 թ. փետրվարի 24-օգոստոսի 14) հիմնական առանձնահատկությունն այն էր, որ ավարտին հասցվեց ԼՂՀ-ի ներսում ազատագրական մարտերի շարքը, պատերազմը «նահանջեց» հանրապետության սահմաններից անդին, Ադրբեջան-ԼՂՀ հակամարտությունը թևակոխեց որակական նոր փուլ: Ամենանշանակալի իրադարձությունը Շուշիի ազատագրումն էր մայիսի 9-ին, որն առ այսօր նշվում է նաև որպես Պաշտպանության բանակի օր:

ԼՂՀ ԻՊԿ նախագահի՝ «Պաշտպանական շրջանային լրակազմի ուժերի ու միջոցների կառուցվածքի մասին» հրամանով 1992 թ. օգոստոսի 14-ին ստեղծվեցին 6 պաշտպանական շրջաններ[18]: Միաժամանակ, առկա նյութական ու ռազմական հնարավորություններն առավել արդյունավետ օգտագործելու, իշխանության բոլոր լծակները մեկտեղելու և ռազմաճակատում արմատական բեկում մտցնելու նպատակով 1992 թ. օգոստոսի 15-ին ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեն(ՊՊԿ)՝ Ռ. Քոչարյանի նախագահությամբ:

ՊԲ կազմավորման երրորդ փուլում (1992 թ. օգոստոսի 14–1993 թ. նոյեմբերի 10) նկատելի հաջողություններ են ձեռք բերվել ինչպես բանակաշինության, այնպես էլ հակառակորդի կրակակետերի ու ռազմական պլացդարմների վնասազերծման ասպարեզներում: Այս ամենը հիմք ծառայեց 1993 թ. նո-

[18] Տե՛ս *ԼՂՀ ՊՆ արխիվ*, ԼՂՀ ԻՊԿ նախագահի հրամանագրեր. գործ հմ. 1, հրաման հմ. 2, թ. 3–4:

յեմբերի 10-ին, ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռ. Քոչարյանի հրամանով, ԻՊՈՒ-ի՝ ԼՂՀ ՊԲ-ի վերակազմավորումն ամրագրելու համար[19]: ՊԲ հրամանատար նշանակվեց երիտասարդ գնդապետ Ս. Բաբայանը, առաջին տեղակալ՝ փորձառու զինվորական մասնագետ, հրետանու գեներալ-մայոր Ք. Իվանյանը:

ՊԲ-ի կազմավորման չորրորդ փուլը մի յուրօրինակ փորձաշրջան էր թե՛ հրամանատարության և թե՛ զինանձնակազմի համար: Օմարի լեռնանցքից մինչև Արաքս գետը ձգվող ռազմաճակատի ողջ երկայնքով Ադրբեջանի լայնածավալ հարձակումներին համարժեք հակահարված տալը, հաստիքակառուցվածքային ու կադրային բարելավումները հիմք դարձան 1994 թ. հունվարի 4-ին ՊԲ-ի կառուցվածքը ԼՂՀ ՊՊԿ նախագահի կողմից հաստատելու համար, ինչը, փաստորեն, նշանավորեց ՊԲ-ի կազմավորման ավարտը[20]:

Հիրավի, ՊԲ-ի ստեղծումը կարևոր նշանակություն ունեցավ հակառակորդի ագրեսիայի կասեցման և պետական շինարարության ասպարեզում նվաճումներն ամրապնդելու համար:

Այսպիսով, ինչպես հստակ երևում է ներկայացված ակնարկից, Պաշտպանության բանակը անցել է կազմավորման համեմատաբար կարճատև, բայց հագեցված ու բովանդակալից ուղի, որն արձանագրված է նաև համապատասխան որոշումներով ու հրամանագրերով: Մեր կարծիքով իրավաբանորեն ՊԲ-ի կազմավորման օրը 1992 թ. փետրվարի 24-ն է, երբ մինչ այդ տարերայնորեն կազմավորված ինքնապաշտպանական-կամավորական ջոկատները պետական կարգավիճակ ստացան: Այդուհանդերձ, չառարկելով մայիսի 9-ը նաև որպես ՊԲ-ի օր նշելու ավանդույթի շարունակմանը, առաջարկում ենք զինծառայողների ծառայության ստաժը հաշվարկել գոնե 1992 թ. փետրվարի 24-ից, բայց ոչ երբեք նույն թվականի

[19] Տե՛ս *ԼՂՀ կառավարության արձանագրային բաժին*, ԼՂՀ ՊՊԿ նախագահի որոշումները. Արձ. հմ. 33, որոշում հմ. 323:
[20] Տե՛ս նույն տեղը, Արձ. հմ. 36, որոշում հմ. 357:

սեպտեմբերի 1-ից, ինչպես անարդարացիորեն արվում էր մինչև վերջերս...

Կարծում ենք, հարցի արծարծումները նպաստել են Պաշտպանության բանակի զինծառայողների ծառայողական ստաժի հաշվարկման վերանայմանը: Այսպես, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մ. Հակոբյանի հրամանով մարտական գործողություններին մասնակցած և համապատասխան կարգավիճակ ունեցող ՊԲ զինծառայողների զինծառայության ստաժում որպես օրացուցային ստաժ արդեն հաշվի է առնվում 1992 թ. փետրվարի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածը[21]:

[21] Տե՛ս ԼՂՀ Պաշտպանության նախարարի հրաման թիվ 179 առ 15. 06. 2007 թ.: